Մարտ 2013թ.

«ԿԱՆԱՉ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Կառավարում է նա, ով տիրապետում է տեղեկությանը:

Այս համարում

- ՀՀ մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին - էջ 2
- Միջազգային կառույցների և կազմակերպությունների դերը շրջակա միջավայրի լոկալ կառավարման գործում – էջ 4-6
- Բաց դռների օրեր Դիլիջանում, Եղեգնաձորում, Գորիսում – էջ 7-9
- Հասարակության առաջարկների ընդունման մասին (Գորիս) - էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻՆ

Անվանում, ընդունման վայր և տարեթիվ	Վավերացվել է ՀՀ-ի կողմից	Ուժի մեջ է ՀՀ համար
ԳԼՈԲԱԼ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ		
«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար 1971թ.)	1993թ. ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ	1993թ.
«Համաշխարհային մշակութայինև բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ,1972թ.)	1993 թ. ՀՀ-ն միացել է որպես իրավահաջորդ	1993 թ.
ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո,1992թ.)	31.03.1993թ.	14.05.1993 թ.
Կարտագենյան արձանագրություն (Մոնրեալ, 2001թ.)	16.03.2004 թ.	29.07.2004 թ.
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք,1992թ.)	29.03.1993թ.	21.03.1994 թ.
Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	26.12.2002 թ.	16.02.2005 թ.
ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	23.06.1997 թ.	30.09. 1997 թ.
«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	28.04. 1999 թ.	01.10.1999 թ.
«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	28.04. 1999 թ.	01.10.1999 թ.
Մոնրեալի արձանագրության Լոնդոնյան ուղղում	22.10.2003 թ.	26.11.2003թ.
Մոնրեալի արձանագրության Կոպենհագենի ուղղում	22.10.2003 թ.	26.11.2003թ.
Մոնրեալի արձանագրության Պեկինյան ուղղում	29.09.2008 թ.	18.03.2009թ.
Մոնրեալի արձանագրության Մոնրեալի ուղղում	29.09.2008 թ.	18.03.2009թ.
ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա(Բազել, 1989թ.)	26.03. 1999 թ.	01.10.1999 թ.
«Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերին պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.)	22.10.2003թ.	26.11.2003 թ.

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001թ.)	22.10.2003 թ.	17.05.2004 թ.
Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն 1979թ.)	10.04.2008 թ.	21.01.2009 թ.
«Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին»կոնվենցիա (Բոնն, 1979թ.)	27.10.2010 թ.	01.03.2011 թ.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ		
ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	14.05.1996 թ.	21.02. 1997 թ.
«Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկան և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրություն	Վավերացման փուլում է	
ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո1991թ.)	14.05.1996 թ.	10.09. 1997 թ.
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	25.10.2010 թ.	24.04.2011 թ.
ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)	14.05.1996 թ.	21.02. 1997 թ.
ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս1998թ.)	14.05.2001 թ.	01.08.2001 թ.
ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային գետերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.)		
«Ջրի և առողջության մասին» արձանագրություն (Լոնդոն, 1999թ.)	Վավերացման փուլում է	
«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (Ժնև, 1976թ.)	04.12.2001 թ.	15.05.2002 թ.
Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000թ.)	23.03.2004 թ.	01.07.2004 թ.
«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն 1979թ.)	26.02.2008 թ.	01.08.2008 թ.

Միջազգային կառույցների և կազմակերպությունների դերը շրջակա միջավայրի լոկալ կառավարման գործում

Էկոլոգիական միջազգային համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտի նորմերի ու միջոցառումների համախումբ է, որը նախանշում է էկոլոգիական համագործակցության սկզբունքները, միջազգային կազմակերպությունների գործունեությունն ու միջազգային պայմանագրերի կնքումը: Միջազգային էկոլոգիական համագործակցությունը (ՄԷՀ) իրականացվում է ընդգրկման տարբեր հնարավորություններով մի քանի մակարդակներում:

Շրջակա միջավայրի պահպանության օբյեկտները, որոնք գտնվում են պետության իրավասությունից դուրս, բաժանվում են՝

- բոլոր երկրների կողմից օգտագործվող՝ մթնոլորտ, օզոնային շերտ,
- մի քանի երկրների կողմից օգտագործվող (Անտարկտիդա, Բալթիկ ծով, Սև, Բորենցի ծովեր),
- 2 պետության կողմից օգտագործվող՝ որպես կանոն սահմանային օբյեկտները (Արաքս գետ):

Ֆլորայի ու ֆաունայի պահպանության նպատակով ստեղծված է միջազգային Կարմիր գիրք, որի մեջ ներառված են հատուկ պահպանության կարիք ունեցող կենդանիների ու բույսերի հազվագյուտ և վերացող տեսակներ:

Իրականացվում են կոնվենցիաներ ռազմական և այլ տեսակի թշնամական ազդեցությունը բնական միջավայրի վրա բացառելու համար, մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մասին, վայրի կենդանիների միգրացող տեսակների, Միջերկրական ծովը աղտոտումից զերծ պահելու, վայրի ֆլորայի ու ֆաունայի տեսակների միջազգային առևտրի մասին և այլն:

Ավելի քան 100 միջազգային կազմակերպություններ ակտիվորեն զբաղվում են շրջակա միջավայրի պահպանությամբ: Առավել հեղինակավորը ՄԱԿ-ն է, որը էկոլոգիական պրոբլեմները դիտարկում է Գլխավոր ասամբլեայում (<<Երկրի բնությունը ներկա ու ապագա սերունդների համար պահպանության պետությունների պատմական պատասխանատվության մասին>> 1981թ., Բնության համաշխարհային խարտիան 1982թ.), կոնֆերանսներում (Ստոկհոլմ 1972թ., Ռիո-դե-Ժանեյրո 1992թ., Ռիո +20 2012թ.), խորհրդակցություններում (Վիեննա, Մոնրեալ և այլն):

1972թ. ՄԱԿ-ում ստեղծվեց ՅՈՒՆԵՊ-ը՝ շրջակա միջավայրի հարցերով հատուկ օրգանը: Գործում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ՄԱԳԱՏԷ), ՄԱԿ-ի կրթության, Գիտության և մշակույթի գործակալությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (զբաղվում է հիգիենայի ու օդի աղտոտվածության դեմ պայքարի հարցերով), Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպությունը (զբաղված է կլիմայական ծրագրերով, եղանակի կանխատեսումներով), Բնության ու բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը: Գոյություն ունեն ՄԱԿ-ի Տնտեսական ու սոցիալական հանձնաժողովի ռեգիոնալ կազմակերպություններ:

Միջազգային էկոլոգիական համագործակցությունը հանգեցրել է անհրաժեշտությանը, որ Հայաստանը հարևան երկրների հետ երկկողմանի կազմակերպություններ՝ ջրամբարների կառուցման ու շահագործման, ջրի որակի համալիր կառավարման հանձնաժողովներ և այլ տեսակի մարմիններ ստեղծի:

Կողմերի առավել մեծ ընդգրկում ունեն շրջակա միջավայրի պահպանության միջազգային կոնվենցիաները, որոնք, ունենալով միջպետական նշանակություն, որպես կանոն կնքվում են պետությունների կառավարությունների մակարդակով և միջազգային էկոլոգիական համագործակցության արտահայտման ձև են: Կոնվենցիայի ստորագրմամբ

կամ վավերացմամբ պետությունը իր վրա է վերցնում այդ միջազգային փաստաթղթով սահմանված պահանջների կատարման պարտավորություններ: Այդ պարտավորություններից առաջնայիններից է օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների ներառումը, որպեսզի համապատասխանություն լինի օրենսդրության ու կոնվենցիայի նորմերի միջև:

Միջազգային էկոլոգիական համագործակցության սկզբունքների կիրառումը մեր երկրում

Հայաստանի էկոլոգիական քաղաքականությունը պետք է բխի համընդհանուր էկոլոգիական անվտանգության ու միջազգային բնապահպանական համագործակցության զարգացման անհրաժեշտությունից՝ հանուն ներկա ու ապագա սերունդների: Միջազգային հանրությունը երկարատև մշակել ու ձևավորել է միջազգային էկոլոգիական համագործակցության հիմքերը՝ խորհրդատվության, առաջարկությունների ու ցանկությունների տեսքով: Ամրագրելով դրանք օրենքով՝ Հայաստանն իր վրա դրանց իրականացման, դրանց իրականացմանը նպաստող գործնական քայլերի ձեռնարկման պարտավորություններ է վերցրել:

Յուրաքանչյուր պետություն զարգացման ու իր քաղաքացիների կարիքները բավարարելու նպատակով իրավունք ունի օգտագործելու շրջակա միջավայրն ու բնական ռեսուրսները: Դրանով է արտահայտվում պետության ինքնիշխանությունը (սուվերենությունը), դրանով կանխորոշվում է երկրի էկոլոգիական քաղաքականությունը, սահմանվում էկոլոգիայի ու տնտեսության համադրությունը, իրականացվում գիտականորեն հիմնավորված սկզբունքը՝ մի երկրի էկոլոգիական պայմանները չպետք է բարելավվեն մեկ այլ երկրի հաշվին՝ առանց վերջինիս հետարքրքությունները հաշվի առնելու, քիչ զարգացած ու հետամնաց երկրների բնական ռեսուրսները չպետք է անխնա շահագործվեն զարգացած երկրների կողմից, պետության տարածքում տեղի ունեցող տնտեսական գործունեությունը չպետք է վնաս հասցնի շրջակա միջավայրին ինչպես սահմանների ներսում, այնպես էլ՝ իրավասության սահմաններից դուրս (անդրսահմանային աղտոտման դեմ պայքարը, սահմանակից երկրների վրա իր գործունեության բացասական հետևանքների տարածման նախազգուշացումը ժամանակակից աշխարհի առաջնային խնդիրներից է), անթույլատրելի է ցանկացած տնտեսական կամ այլ գործունեություն, որի էկոլոգիական հետևանքներն անկանխատեսելի են (գիտատեխնիկական առաջընթացի զարգացումը և մարդու հնարավորությունները հասել են այնպիսի մակարդակի, երբ անհրաժեշտ է դարձել ներդաշնակեցնել ու համեմատել ատոմային էներգիայի, ճահճացման ու անապատացման բացասական հետևանքներն ու նպաստները): Պետք է միջազգային չափանիշների վրա հիմնված էկոլոգիական վերահսկողություն սահմանվի գլոբալ, ռեգիոնալ ու ազգային մակարդակներում:

Միջազգային համագործակցության կողմերը պետք է ապահովեն գիտատեխնիկական ու առաջադեմ կանխարգելիչ տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվության ազատ ու անարգել միջազգային փոխանակումը (պետական գաղտնիք չհանդիսացող տեղեկատվության փոխանակման համար սահմանների բացումը կարևոր ձեռքբերում է արմատական բարեփոխումների համար և փոխշահավետ բնույթ է կրում), երկրները միմյանց պետք է աջակցեն էկոլոգիական արտակարգ իրավիճակների ժամանակ, շրջակա միջավայրի պրոբլեմների հետ կապված հարցերը պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով:

Միջազգային կազմակերպությունները հետևում են, որպեսզի վերոնշյալ սկզբունքները պահպանվեն ինչպես համաշխարհային, այնպես էլ՝ ազգային մակարդակներում, ուստի համապատասխան գործընթացների արդյունավետ իրականացման համար, ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու համար, միջազգային չափանիշների կիրարկման հնարավորություններ ստեղծելու համար ֆինանսական աջակցություն են ցուցաբերում դրա կարիքն ունեցող երկրներին՝ անհատույց, դրամաշնորհների կամ վարկերի տեսքով գումարներ տրամադրելով ինչպես կառավարություններին, այնպես էլ առանձին քաղաքացիական հասարակության կառույցներին (հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական նախաձեռնություններ, դաշինքներ):

Իրադարձություններ

«Համագործակցության նոր հնարավորություններ և հեռանկարներ բնապահպանական ոլորտի պետական և ոչ պետական կառուցների և կազմակերպությունների միջև»

Համայնքի զարգացման գրավականը իրազեկ հասարակությունն է

6 մարտի: Քաունթերփարթ ինթերնեշնլի աջակցությամբ իրականացվող «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում Դիլիջանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցած «Բաց դռների օր» միջոցառման նպատակն էր մասնակից կողմերի գործունեության և գործառույթների մասին իրազեկել հասարակությանը, ոլորտում գործող կառույցների և կազմակերպությունների շրջանում ձևավորել փոխադարձ վստահության և դրական համագործակցության մթնոլորտ:

Իրենց ներկայացրած կառույցի դռները բացելու մտադրությամբ միջոցառմանը մասնակցեցին Տավուշի մարզպետարանի, Դիլիջանի քաղաքապետարանի, Դիլիջան Ազգային պարկի ներկա-յացուցիչները, Դիլիջանում գործող ՀԿ-ների ղեկավարներ, ԶԼՄ ներկայացուցիչներ:

«Կանաչ կառավարում» ծրագրի փորձագետ Ա. Հարոյանը նշեց, որ հանդիպումը կրում է ճանանչողական բնույթ և բնապահպանությանը միտված պետական հիմնարկների ու ոչ պետական կազմակերպությունների և քաղաքացիների միջև համագործակցությունը առավել արդյունավետ և փոխկապակցված դարձնելու նպատակ է հետապնդում:

Համագործակից կազմակերպությունների պատասխանատուները ներկայացան հաշվետու ելույթներով, անդրադարձան տարաբնույթ խնդիրների, բացթողումների, ինչպես նաև այն ձեռքբերումներին, որոնք նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը տեղական մակարդակում:

Դիլնեթ Սերվիս ՀԿ-ի նախագահ Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց իրենց կազմակերպության ցայսօր ծավալած գործունեության արդյունքները՝ առանձնացնելով համագործակցության շրջանակի ու աշխարհագրության ընդլայնումը: Հույսի կամուրջ ՀԿ-ի Դիլիջանի մասնաճյուղի տնօրեն Ա. Գրիգորյանը մանրամասնեց իրենց կառույցի Դիլիջան համայնքին վերաբերող աշխատանքները, մասնակիցների հետ կիսվեց միջազգային թարմ փորձով՝ պատմելով վերջերս Իսրաել կատարած այցի մասին:

ԲՀՏ Օրհուս կենտրոնի գործունեությունը Ա. Հարոյանը ներկայացրեց՝ ներկաների ուշադրությունը հրավիրելով կենտրոնի գործունեության այս տարվա հիմնական ռազմավարական ուղղության՝ համայնքային անվտանգության նախաձեռնության վրա:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց Դիլիջանի քաղաքապետարանի աշխատանքները՝ մասնավորելով Դիլիջան թերթը, որն ակտիվորեն համագործակցում է բոլոր կազմակերպությունների հետ և պատրաստ է լուսաբանել դրանց կատարած աշխատանքները: Վ. Հովհաննիսյանը ներկայացրեց Տավուշի մարզպետարանի առաքելությունը և գործնեությունը, հասարակական կառույցների հետ համագործակցությունը: Անդրադառնալով Դիլիջան Ազգային պարկի գործունեությանը՝ գիտական գծով փոխտնօրեն Ռ. Բեգլարյանը հավելեց, որ Ազգային պարկին վերաբերող բազմաթիվ քննարկումներ և հասարակական լսումներ իրականացվում են հենց Դիլիջանի Օրհուս կենտրոնում՝ հասարակության համար առավել հասանելի լինելու համար:

Որոշեցին համագործակցությունն ամրապնդել՝ ելնելով համայնքային անվտանգության դրույթներից: Որպես հաջորդ քայլ՝ որոշվեց առաջիկայում համայնքային քննարկում անցկացնել քաղաքի և Դիլիջան Ազգային պարկի աղբահանության խնդիրների շուրջ:

16 մարտի: «Բաց դռների օր» տեղի ունեցավ նաև Եղեգնաձորում: Միջոցառման նպատակն էր հասարակության շրջանում բարձրացնել իրազեկվածության մակարդակը շրջակա միջավայրի պահպանության ու կառավարման ոլորտում ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության վերաբերյալ:

Հանդիպման սկզբում ներկայացվեց Բնապահպանական տեղեկատվության Օրհուս կենտրոնի գործունեությունը, այդ թվում՝ «Կանաչ կառավարում» ծրագրի իրականացման աշխատանքներում ներգրավվածությունը: Եղեգնաձոր ու Վայք համայնքների ՏԻՄ ներկայացուցիչները ներկայացրեցին ՏԻՄ-երի կողմից շրջակա միջավայրի կառավարման ու պահպանման ոլորտում իրականացված միջոցառումներն ու գործողությունները: Ներկայացված տեղեկատվությունը

Եղեգնաձորի Երիտասարդական բանկ կոմիտեի անդամներն ու «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության ներկայացուցիչները տեղեկատվություն տրամադրեցին շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ընթացիկ ծրագրերի ու բնապահպանական նախաձեռնությունների վերաբերյալ: «Սյունիք» ԲՀԿ-ի Համայնքային ու երիտասարդների զարգացման ծրագրերի ղեկավար Ն. Հարությունյանը ներկայացրեց ընթացիկ ու իրականացված մի շարք ծրագրեր, սակայն դրանցից ամենահրապուրիչն ու ընդգրկունը Հարավային Կովկասում հայ-վրաց-աբխազ-ադրբեջանցի մասնակիցներից կազմված ամառային ճամբարների ծրագիրն էր, որի ժամանակ ճամբարի մասնակիցները ոչ միայն ծանոթանում են հարևան երկրների իրենց հասակակից երիտասարդների հետ, այլև՝ համատեղ աշխատում տարբեր ծրագրերի շուրջ, որտեղ բնապահպանությունն ամենաառաջնայինն է: Եղեգնաձորի Երիտասարդական բանկ կոմիտեի անդամներն էլ ներկայացրերցին, թե ինչպես «Հայաստանն առանց աղբի 2012» նախաձեռնությունն իրականություն դարձավ նաև Վայոց ձորում, պատմեցին «Մտածի՛ր կանաչ» ծրագրի մասին, որի նպատակն է բարձրացնել երիտասարդների էկոլոգիական կրթության մակարդակը, ցույց տալ, որ օգտագործված թուղթն աղբ չի կարելի համարել:

Միջոցառման մասնակիցներն առաջարկեցին քաղաքացիական հասարակության կառույցների ու ՏԻՄ-երի կողմից իրականացվող միջոցառումներին ապահովել քաղաքացիների մասնակցությունը, ստեղծել փոխհամագործակցություն, որը կբարձրացնի իրականացվող ծրագրերի արդյունավետությունը: Իսկ ՏԻՄ ու հասարական կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպման մասնակիցներին հորդորեցին լինել ավելի նախաձեռնող ու պահանջատեր՝ խոստանալով ամեն կերպ օժանդակել շրջակա միջավայրի պահպանմանն ուղված նախաձեռնությունների իրականացմանը:

Բաց դռների օրը համագործակցության նոր եզրերի ու տեղեկատվության տարածման աղբյուր հանդիսացավ Եղեգնաձոր համայնքի բնակիչների, Եղեգնաձորի և Վայքի ՏԻՄ-ի ու հասարական ոլորտի ներկայացուցիչների համար:

20 մարտի: Քառնթերփարթ ինթերնեշնլի աջակցությամբ իրականացվող «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում Գորիսի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ «Համագործակցության նոր հնարավորություններ բնապահպանական ոլորտի կառույցների, կազմակերպությունների միջև ՀՀ Սյունիքի մարզում» խորագրով «Բաց դռների օր»: Միջոցառման նպատակն էր բարձրացնել շրջակա միջավայրի պահպանության ու կառավարման ոլորտում ՏԻՄ-երի, պետական և քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը:

Իրենց ներկայացրած կառույցի դռները բացելու՝ գործունեությունը, հասարակության առջև պարտավորությունները, հասարակության հետ համագործակցության հնարավորությունները ներկայացնելու պատրաստակամությամբ ներկա էին Սյունիքի մարզպետարանի, Գորիսի քաղաքապետարանի, Սյունիքի ՄԱԹ (Մարզային աջակցության թիմ), Սյունիքի մարզային հուշարձանների պաշտպանության գրասենյակի և Գորիսի անտառա-պետության աշխատակիցներ, հասարակական թևից՝ «Գորիսի մամուլի ակումբ», «Սոսե», ԳԵՄ, ԻՏԵԿ ՀԿ-ների, «Քաղաքացիական գործունեություն և գործնական քայլեր» հասարակական խմբի անդամներ, Գորիսի «Լաստ» հեռուստատեսության աշխատակիցները:

Գորիս համայնքի ղեկավարի աշխատակազմի իրավաբան Լ. Ղահրամանյանը ներկայացրեց քաղաքապետարանի առաջիկա անելիքներն ու ծրագրերը, համայնքի ղեկավարի իրավասություններն ու պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության ու վերահսկման առումով: Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Միրզոյանը ներկայացրեց շրջակա միջավայրի կառավարման ոլորտում մարզպետարանի գործառույթներն ու պարտավոր-վածությունները:

Սյունիքի ՄԱԹ-ն հիմնականում միջազգային կազմակերպությունների միջոցով գյուղատնտեսական ծրագրեր է իրականացնում, ուստի գլխավոր մասնագետ Մ. Հովակիմյանը խոսեց դրանցից բնապահպանական ուղղվածություն ունեցողների մասին՝ կարևորելով արոտների վերականգնման ուղղությամբ այս պահին ընթացող աշխատանքները: Գորիսի անտառապետության գլխավոր անտառապետ Լ. Յուզբաշյանը նկարագրեց իրենց ֆոնդում եղած անտառատարածքների վիճակը, պահպանության աշխատանքները:

Մնացյալ կազմակերպությունների ներկայացուցիչները խոսեցին վերջին տարիներին իրականացված ծրագրերի, ստացված արդյունքների ու համագործակցության դաշտի մասին:

Ծավալվեց բուռն քննարկում ու երկխոսություն: Մասնակիցները կարևորեցին միջոցառումը, հետագա շփումներն ու համագործակցության անհրաժեշտությունը:

Այս ընթացքում ծրագրի գործընկեր Օրհուս կենտրոնները համայնքների ղեկավարների ու ավագանիների անդամների ուշադրությանն են ներկայացրել նախապես քաղաքացիական հասարակության կառույցներից ու շահագրգիռ քաղաքացիներից համայնքների զարգացման քառամյա ծրագրերի ու համայնքի տարեկան բյուջեների նախագծերի բնապահպանական մասի վերաբերյալ հավաքագրված առաջարկությունները, որոնց մի մասն ընդունվել են: Այդ մասին Գորիսի քաղաքապետն, օրինակ, տեղեկացրել է պաշտոնական նամակով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3,
հեռ. (0284)2-25-52, ֆաքս 2-25-53
էլ. փոստ՝ info@goriscity.am, www.goriscity.am

20 մարտ 2013թ. N 03/05-14

ԳՈՐԻՍԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍՑԵԱԳՐՈՂ՝ ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պողոսյան

Ի պատասխան Ձեր 30.01.2013թ-ի թիվ Ե N-001/13 գրության տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկները համայնքի քառամյա զարգացման 2013-2016թթ-ի ծրագրի բնապահպանական մասի վերաբերյալ ընդունվել են Գորիսի քաղաքապետարի կողմից և ներառվել է համայնքի քառամյա զարգացման 2013-2016թթ-ի ծրագրում: Միաժամանակ հայտնում ենք, որ Գորիսի քաղաքապետարը պատրաստակամ է համագործակցելու, և կվողջունի բնակչության, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավածությունը Ձեր կողմից նշված խնդիրների լուծման համար:

Հարգանքով՝ ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

«Կանաչ կառավարում» ծրագրին հետևեք նաև www.aarhus.am կայքում գործող «Քաղաքացիական իրազեկություն» էջից:

Այցելեք ու եղեք տեղեկացված:

http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=481&Itemid=590&lang=am

Սույն էլեկտրոնային տեղեկագիրը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինտերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ՔՀՏԻԱ ծրագրի և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Բլեջան» ՀԿ-ին, և, հնարավոր է, չհամընկնեն Քաունթերփարթ ինտերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության , ԱՄՆ ՄԶԳ և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Հարցերի կամ առաջարկությունների համար դիմել՝
հեռ: +374 264 6 15 11, բջջ: +374 77 76 46 41, +374 93 99 12 12
ֆաքս: +374 264 2 34 29
Email: blejanli@gmail.com